ղեկավարութեան տակ՝ նպատակ ունենալով գրաւել Բագուն և առաջանալ դէպի հիւսիս ու արևելք։ Ցունիսի սկզբներին Գանձակ հասան և թիւրք կանոնաւոր զօրամասեր։ Ազրբէջանի կառավարութիւնը, դեռ Թիֆլիսից, ուժեր էր հաւաքում Բագուի գրաւման համար. ոտքի էին հանուած բոլոր զօրամասերն ու զինուած խմբերը և ուղղուած Բագուի վրա։ Նրանց առաջաւոր մասերն արդէն սկսել էին երևալ Հաջի-Կաբուլի մօտերը. մի ուրիշ թև շարժւում էր դէպի Շամախի։ Անհրաժեշտ էր շտապել՝ նախաձեռնութիւնը թշնամուն չտալու համար։ Եւ Զին.-Ցեղափոխ. Կոմիտէն որոշեց անցնել վճռական գործողութիւնների — յետ չպրտել թիւրքերին Հաջի-Կաբուլից և գրաւել ռազմական տեսակէտից կարևոր Աղսու-Քիւրդամիր գիծը՝ մօտ 160 կիլոմետր տարածութեամբ։

Ցունիս 5-ից Բագուի զօրքերը անցան յարձակման և մի շարք տաք ու յաջող ճակատամարտներից յետոյ, մինչև յունիս 26, գրաւեցին մի կողմից Կարամարգիան—Քիւրդամիր—Զուբովկա և միւս կողմից՝ Զուբովկա—Պետրոպաւլովսկ գծերը, այսինքն՝ աւելի, քան նախորոշուած էր արշաւանքի սկզբին։ Թիւրք-ազրբէջանեան ուժերը, ծանր կորուստներով, քաշուեցին յետ։ Բագուեցիների ձեռքը անցաւ հարուստ աւար-թնդանօթներ ու գնդացիրներ, հրացան ու փամփուշտ։ Կուի դաշտում մնացած դիակների թիւը հաշւում էր հարիւրներով։

Ցունիս 25-ին յայտնի դարձաւ, որ թիւրքական մի դիվիզիա շարժւում է դէպի Գէոքչայ, մի ուրիշն էլ՝ Եւլախի ուղղութեամբ և որ իսլամ բանակի սպայակոյտը փոխադրւում է Ուշարի կայարանը՝ աւելի վճռական գործողութիւնների դիմելու համար։ Բագուի հրամանատարութիւնը որոշեց շեշտակի հարուածով խանգարել այդ ծրագիրը, և յունիս 27-ին շարժուեց Ուշարին ու Գէոքչայը գրաւելու դիտաւորութեամբ։ Սկսուեցին կատաղի կռիւներ։ Ցունիս 27-28-ին թիւրքերը մեծ զոհեր տալով՝ նահանջեցին և յունիս 29-ին անցան հակայարձակման։ 3 օրւայ արիւնահեղ կռիւների մէջ յոգնած, անօթի ու ծարաւ՝ գերազանց ուժերի ճնշման տակ՝ Բագուի զօրամասերը սկսեցին նահանջել դէպի Կարամերգեան՝ իրենց հետ տանելով և Գէոքչայի հայ ազգաբնակութիւնը։

Այդ օրւանից նախաձեռնութիւնը անցաւ թիւրքերի ձեռքը։ Բագուի ուժերը օր աւուր հալչում էին. յունիս 10-ից սկսած նրանք կորցրել էին 7 սպայ և 265 զինուոր սպանուած, 16 սպայ և 534 զինուոր վիրաւոր։ Անառողջ կլիման, ջրի պակասութիւնը, անբաւարար սնունդն ու հագուստը դարդացնում էին հիւանդութիւններ ու դասալքութիւն։ Մարտիկների թիւը, որ արշաւանքի սկզբին 4,400 էր, իջել էր 2,400-ի։ Այդ պատճառով, յուլիս 1-ից սկսած տեղի ունեցաւ անընդհատ նահանջ, որի ընթացքին թշնամին յարձակումներ էր գործում, աշխատում անցնել թիկունքը, կուի էր բռնւում բագուեցիների հետ։ Յուլիս 6-ին Բագուի ուժերը կանգնեցին Շամախի—Կարասախկալ—Քիւրդամիր գծի վրա։

Յուլիս 5-ին Պարսկաստանից Բագու հասաւ գնդ. Բիչերախովը իր զօրամասով և նշանակուեց Բագուի պաշտպանութեան պետ, որ խիստ բարձ-